



## ՀԱՅՐԵՆԻ ԹԵՄԵՐՈՒՄ

### ԲԱՍԱՐԳԵԶԱՐԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՌԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐՍՄԱՑՈՒՄԸ

Վեհափառ Հայրապետի բարեհամ կարգադրությամբ, Մայր Աթոռի լուսարարապետ գերազնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեղականինը, ընկերակցությամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարանի և բարեհնորհ Հակոբ սարկավագ Պողապալյանի, սեպտեմբերի 20-ի շաբաթ օրը կեսօրի վերջ ճանապարհվեցին դեպի Բասարգեշար՝ ներկա գոնվելու եկեղեցու վերաբացման հանդիսության և կատարելու եկեղեցու սրբման կարգը:

Բասարգեշարի պատմական անունն է եղած Սոդրի Նաև Սևանա լճի հարավ-արևելքում բացված մի շրջկենտրոն է, լճի ափից հազիկ 15 կմ. հետավորությամբ: Նաև սահմանակից է Ղարաբաղին ու Շամիսորին: Ժողովովի զգակի մասը Ալաշկերտից ու Բայազետից եկվողներ են:

Երբ Սևանա ծովի կապույտից ակամամեր աչքերը բաժանվեցին, փարթամ կանաչի մեջ երևաց երկնի կապույտին սլացող մի գմբեթ, երկնայինը երկրայինին կապող մի օղակ: Մայրամուտի այս խորհրդավոր ու հմայիչ պահին, ամայության ու լոռության մեջ, մարդկային հոգին ինքնարերաբար տենչում է աղոթքի: Այսպիսի հոգեկան սլացքի մեջ էինք, երբ հասանք Բասարգեշար:

Մեզ դիմավորեցին արժանապատիվ Տ. Զավեն, Տ. Մեսրոպ, Տ. Հակոբ քանահանայրերը, շրջապատված հավատացյալ ժողովորդի Հոծ բազմությամբ:

Սրբազն հայրը ՇՀՐԱՉԱՓԱԿԱ-ՆՎ առաջնորդվեց եկեղեցու, որ իսկապես ճարտարապետական մի լքնաղ կոթող է:

Բասարգեշարի եկեղեցին կառուցվել է 1905—1912 տարիների ընթացքում, նախկին Ս. Աստվածածին եկեղեցու վայրում, նույն անունով, Խորեն Կաթողիկոս Մուղաղեկյանի Արարատյան թեմի առաջնորդության շրջանում:


Վերսատին դողանցում էին Ս. Աստվածածին եկեղեցու զանգերը Երեկոյան ժամերգության պահն է. «Ըստ առ Աստուած կարդացի և նա լուս ինձ յերեկոյում...»: Պայծառ և վեհ եկեղեցում տարածվում է ալոյս գուարթ»-ի մեղեդին, խնկի թափշ մշուշով: Արարողությունը շատ քաղցր է ու առինքնուղ, աղոթքի և խնկի ծարավ հոգիները տրամադրության և գոհումակության արցոննք են թափում: Կիրակամտի ժամերգության ավարտին Սահակ սրբազնը հոգեշնունչ քարոզ է սոսում: Նա ժողովրդին շնորհավորում է և խառատում՝ ապրել իրենց պատերի ոգով ու հավատով, շեն պահելով Աստուածո Տունը:

Սեպտեմբերի 21-ի կիրակի օրը, առավուտյան ժամերգությունից հետո, կատարվեց եկեղեցու սրբման կարգը: «Օրհնեսցի և սրբացի եկեղեցիս...»: Մաքրված ու սրբած եկեղեցում պատարագ է մատուցում սրբազն հայրը ՇՀՐԱՉԱՓԱԿԱ-ՆՎ առաջ սրբազն հայրը քարոզեց: Սրբազնը հաղորդեց Վեհափառ Հայրապետի օրհնություններն ու ողջունը, ապա ինսւեց Հայ եկեղեցու և Մայր Աթոռ. Տ. Էջմիածնի կատարած պատմական դերի ժամին, հայ հավատացյալ ժողովորդի կյանքում: Վերջում սրբազնը սրբատափ բարեմաղթություններ է անում Ս. Էջմիածնի անսասանության, Վեհափառ Հայրապետի կյանքի արեշտառության և հայ ժողովորդի և Մայր Հայրենիքի հետագա է՛լ ավե-

ի զարգացման և վառ ապագայի համար։ Հավարտ սուրբ պատարագի, հավատացյալ-ներից շատերը երկյուղով և հավատով մո-տենում են սուրբ հաղորդության։

Եկեղեցու բացման ուրախ առիթով հա-վատացյալները բաղմաթիվ նվերներ էին

ուրախությունն ու գոհանակությունը։ Մենք խորապես վայելեցինք մեր հավատացյալ ժողովով ազնիվ հյուրասիրությունը և մեծ գոհոնակությամբ բաժանեցինք նրա «աղն ու հացը» եկեղեցու վերաբացման ուրախ առիթով։



ԹԱՍՄԱՐԳԵԶԱՐԻ Ս. ԱՍՏՎԱՇԱԽԻՆ ՍԿԵՂՑՑԻՆ

բերել։ Սրբազն հայրը օծեց և օրհնեց նաև նվեր բերված սրբապատկերները։ Հավարտ սուրբ պատարագի եկեղեցու բակում տրվեց մատաղասեղան։ Սրբազնը օրհնեց և ապա նախագահեց սեղանին։

Դժվար է նկարագրել ժողովուդի խանդա-վառությունը, սրտարաց ընդունելությունը,

Սեպտեմբերի 22-ին, երկուշաբթի օր, մենք հրաժեշտ առինք թասարգելարի ազ-նիվ և հավատացյալ ժողովուդից և լավա-գույն տպավորություններով վերաբարձանք Մայր աթոռ։

ՀԱԿՈԲ ՍԱՐԿԱՎԱԳ ՊՈԶԱՊԱԼՅԱՆ